ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

11 մայիսի 2015 թվականի N 50-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. N 1335-Ն որոշմամբ հաստատված ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգով, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ.**

1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանին 4 օրով՝ 11.05.2015թ. մինչև 14.05.2015թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ կառավարության աշխատակազմ՝ պաշտոնական գործերով:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Սիլվա Սահակյանին և առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Նունե Գևորգյանին 2 օրով՝ 12.05.2015թ. մինչև 13.05.2015թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ՝ պաշտոնական գործերով:
3. Աշխատակազմի ղեկավարի տեղակալ Գրիգոր Թադևոսյանին 3 օրով՝ 12.05.2015թ. մինչև 14.05.2015թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ՝ պաշտոնական գործերով:
4. ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական Վոլոդյա Հովհաննիսյանին 3 օրով՝ 15.05.2015թ. մինչև 17.05.2015թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ պաշտոնական գործերով:
5. Աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

2015թ. մայիսի 11
ք. Կապան